ՏՐՏՈՒՆՋ

Օրերս անպտուղ, տխուր, ձանձրալի,
Ու գընում եմ ես ունայն տրտունջով
Իմ սիրած մարդկանց, իմ լաւ յոյսերի
Գերեզմանների շարքերի միջով։

Թաղել եմ նրանց, տխուր է ճամբան,
Եւ իմ հարազատ աշխարհքում՝ օտար,
Օտար ու մենակ անցուորի նման,
Որ չունի ընկեր, ոչ տեղ ու դադար։

Օտար են շուրջդ, ու չեն հասկանում
Ոմանք քո վիշտը, ոմանք քո լեզուն,
Անտարբեր գալոց երջանիկ օրին՝
Զգիտեն նրա կարօտը անքուն...

Ընչի՞ն մարդուկներ, լրբօրէն հանգիստ,
Անսիրտ, փոքրոգի, գրծծի ու կոպիտ.
Մեռնում են, մարում նրանց հայեացքից
Ե՛ւ հոգու ձրգտում, և՛ սրտի ժպիտ։

Էլ ո՞ւմ առաջին սիրտդ բաց անես,
Ո՞ւմ համար երգես սրրտալի երգեր,
Ո՞ր չրքին սիրես, կեանքդ նուիրես,
Էլ ինչպէս ապրես անսէր, անընկեր...

Եւ օրերս այսպէս տխուր, ձանձրալի,
Ու գընում եմ ես ունայն տրտունջով
Իմ սիրած մարդկանց, իմ լաւ յոյսերի
Գերեզմանների շարքերի միջով։

ՑՈՎՀԱՆ. ԹՈՒՄԱՆԵԱՆ